ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/29

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցիչներ՝ Ա. Միրզոյան, Ա. Մնացականյան,
Մասնակից՝ «Արհովշին» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Գրիգորյան,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.04.2019թ. թիվ 26/26-1/6998-2019 գրությամբ «Արհովշին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 19.04.2019թ. թիվ 02/16.4/2009-19 գրության հիման վրա, 26.04.2019թ. «Արհովշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 19.04.2019թ. թիվ 02/16.4/2009-193 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար 2019 թվականի փետրվարի 11-ին կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 ծածկագրով Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգում առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել <<Արհովշին>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից), որին ծանուցվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակցի հայտը մերժվել է՝ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունների մի մասը չշտկելու հիմքով:»:

3. <u>«Արհովշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 29.04.2019թ. գրությամբ դիմել է «Արհովշին» ՍՊԸ-ին ՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.04.2019թ. թիվ 26/26-1/6998-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը 27.05.2019թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«1. Հանձնաժողովն իր N 3-3 արձանագրության 1.1 կետի մեջ ներառել է աղյուսակ 2 մասից բաղկացած: Աղյուսակի առաջին մասը վերաբերում է Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների նկարագրությանը, իսկ երկրորդը արձանագրված անհամապատասխանությունների ուղղմանը:

Այսպես՝ աղյուսակի մեջ ներառված ա) ենթակետի 1-ին մասում նշել է. «Հավելված 5.1-ի աղյուսակում մասնակիցը լրացրել է «ամբարձիչ», սակայն վարձակալության պայմանագրում և տեխնիկական վկայագրում նշված է «բարձիչ», ինչը չի համապատասխանում հրավերի պահանջին: Նույն տեղում լրացված չէ նաև պետհամարանիշը»:

Նույն աղյուսակի մեջ ներառված 2-րդ մասում Հանձնաժողովը նշել է. «Ներկայացվել է ամբարձչի վարձակալության նոր պայմանագիր, սակայն չի ներկայացվել հրավերի 5.1 հավելվածի շտկված տարբերակը»:

Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները համեմատելով միմյանց հետ, գալիս ենք ակնհայտ եզրահանգման, որ Հանձնաժողովը որպես թերություն Ընկերությանը մատնանշել է այն, որ հրավերի պահանջով վերջինս պետք է ներկայացներ ոչ թե «բարձչի», այլ «ամբարձչի» վարձակալության պայմանագիր, ինչը Ընկերությունը հստակ շտկել է:

Կարևոր է այն հանգամանքը. որ Հանձնաժողովը Ընկերությունից չի պահանջել ուղղել հրավերի 5.1 Հավելվածը՝ ինչը և բնականաբար չի ուղղվել Ընկերության կողմից, քանզի դա չի մատնանշվել որպես թերություն:

2. Հանձնաժողովն իր N 3-3 արձանագրության 1.1 կետի բ) ենթակետի 1-ին մասում նշել է. «(...) ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/12 (03.11.17թ.), ԿՄՀՔ-ՊԸԱՇՁԲ-02/17 (01.06.2017թ.), ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2, (23.09.2017թ.) պայմանագրերով նախատեսված աշխատանքներն իրենց բնույթով չեն համապատասխանում հրավերի պահանջով ներկայացված գործունեության լիցենզիաներին. ինչպես նաև ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովների ակտերը բացակայում են, որոնք պետք է հավաստեն պայմանագրով նախատեսված աշխատանքներն (պարտավորությունները կատարված) ամբողջությամբ ընդունված լինելու մասին (ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում):

Հանձնաժողովն իր N 3-3 արձանագրության 1.1 կետի բ) ենթակետի 2-րդ մասում նշել է.

«Մասնակցի կողմից ներկայացվել են նշված 3 պայմանագրերի մասով բացակայող երկկողմանի հաստատված հարկային հաշիվները.

- *ԵՔ ԳՀԱՇՁԲ-17/12 (03.11.17թ.) պայմանագրի մասով 5-րդ կատարողականի (1070002 ՀՀ դրամի) հանձնման-ընդունման արձանագրությունը,*
- *ԿՄՀՔ-ՊԸԱՇՁԲ-02/17(01.06.2017թ.) պայմանագրի ծավալաթերթով նախահաշիվը (Հավելված 1) և երկկողմանի հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունները:*

Մասնակցի կողմից չեն ներկայացվել

- *Նշված 3 պայմանագրերի մասով ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովների ակտերը*
- *ՁՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2. (23.09.2017թ.) պայմանագրի մասով նորից ներկայացվել է դատարկ Հավելված 5-ը*
- *ԿՄՀՔ-ՊԸԱՇՁԲ 02/17(01.062017թ.) պայմանագրի մասով Հավելված 4-ի և 4.1 -ի օրինակելի ձևերը»:*

Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները համեմատելով միմյանց հետ ստանում ենք հետևյալ պատկերը.

Նախևառաջ, եթե հանձնաժողովը նշում է, որ Ընկերության կողմից ներկայացված թվով 3 վերոգրյալ պայմանագրերն իրենց բնույթով չեն համապատասխանում հրավերի պահանջով ներկայացված գործունեության լիցենզիաներին. ապա անհասկանալի է թե ինչու է Հանձնաժողովը հրավերի պահանջով ներկայացված գործունեության լիցենզիաներին չհամապատասխանող պայմանագրերից այնուամենայնիվ պահանջում բացակայող փաստաթղթերը:

Երկրորդը՝ Հանձնաժողովի դիրքորոշմանը հակառակ պետք է պնդենք, որ Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերը համապատասխանում են հրավերի պահանջով ներկայացված գործունեության լիցենզիաներին հետևյալ պատճառաբանությամբ.

ա) բաց մրցույթի հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 7-ի N 1 որոշմամբ թիվ ՀՀՔԿԲՄԱՇՁԲ 19/1 ծածկագրով հրավերի մեջ նախատեսվել են քաղաքաշինության բնագավառում շինարարության գործունեության իրականացման լիցենզավորման հետևյալ ոլորտները.

1) բնակելի, հասարակական և արտադրական. 2) հիդրոտեխնիկական, 3) էներգետիկ և 4) կապ:

թիվ ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2, (23.09.2017թ.) պայմանագրով Ընկերությունը «Ջերմուկ համայնքում իրականացրել է աջափնյա թաղամասի բակային տարածքների բարեկարգում, բակային ճանապարհների ասֆալտապատում ե եզրաքարերի տեղադրում: Պայմանագրին

կից թիվ 1 կատարողական-հաշվետվությունից հստակ երևում է, որ Ընկերությունը նաև իրականացրել է ջրամատակարարման տարաբնույթ աշխատանքներ (անցկացրել է ջրամատակարարման ցանց, D-250սմ ծալքավոր պ/էթ. խողովակի անցկացում ե տեղադրում, բակային հեղեղային կոյուղու, կոյուղու պոլիէթիլինային ծալքավոր խողովակների ՓՅՕՕմմ փորձարկումով տեղադրում և այլն): Վերջինս ակնհայտ վկայում է այն մասին, որ Ընկերությունը ոչ միայն ապահովել է բնակելի, հասարակական և արտադրական, այլ նաև հիդրոտեխնիկական լիցենզավորված գործունեություն: Ավելին տվյալ աշխատանքների իրականացման հրավերի պահանջով ժամանակին հստակ նշված է եղել բնակելի հասարակական, արտադրական և հիդրոտեխնիկական լիցենզիաների գործունեության առկայությունը:

Այդ իսկ պատճառով, Հանձնաժողովի այն պնդումը, որ ՋՀԲՄ-ԱՇՁԸ-2017/2, (23.09.2017թ.) պայմանագրով իրականացված աշխատանքները ներկայիս թիվ «ՀՀՔԿ ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջով ներկայացված լիցենզիաների տեսակներին չեն համապատասխանում՝ չի համապատասխանում օբյեկտիվ իրականությանը:

բ) Ինչը վերաբերվում է Հանձնաժողովի այն պնդմանը, որ ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2. (23.09.2017թ.) պայմանագրի մասով նորից ներկայացվել է դատարկ Հավելված 5-ը, ապա պետք է նշենք, որ այլ բան չէր էլ կարող ներկայացվել, քանզի սույն Պայմանագրի հավելված 5-ը այդպես դատարկ էլ կնքվել է 2 ընկերությունների կողմից «Նախագծին» վերտառությամբ (հիմնականում այն պատճառով, որ նախագծի գծագրերը A4 ֆորմատի թղթի վրա չեն տեղավորվում ծավալի պատճառով):

Առանձնահատուկ պետք է նշենք այն հանգամանքը, որ Ընկերության աշխատակիցը քանիցս զանգահարել է Հանձնաժողով, փորձելով ճշտել և հասկանալ, թե կոնկրետ ինչ փաստաթուղթ է պահանջում Հանձնաժողովը, որպեսզի Ընկերությունը ներկայացնի պայմանագրին կից, այն պարագայում, որ պայմանագրով երկկողմանի հենց այդպես դատարկ էլ կնքվել է Հավելված 5-ը, սակայն, Ընկերության աշխատակցին Հանձնաժողովի կողմից այդպես էլ հստակ պատասխան չի տրվել և չի պարզաբանվել թե ինչ նկատի ունի Հանձնաժողովը և վերջիվերջո ինչպիսի՞ փաստաթուղթ է պահանջում:

Անդրադառնալով Հանձնաժողովի այն պնդմանը, որ Ընկերության կողմից թվով 3 պայմանագրերով բացակայում են, ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովների ակտերը, որոնք պետք է հավաստեն պայմանագրով նախատեսված աշխատանքներն (պարտավորությունները կատարված) ամբողջությամբ ընդունված լինելու մասին, ապա պետք է նշենք հետևյալը.

Սույն հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի բ) պարբերության համաձայն՝ սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտովն երկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Վերլուծելով հրավերի մեջ ներառված վերոգրյալ կետը, պարզ է դառնում, որ Ընկերությունը պարտավոր էր ներկայացնել նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները (ինչը և ներկայացրել է), իսկ ներկայացված պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար Ընկերությունը կարող էր ներկայացնել կամ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրության և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Վերոգրյալ վերլուծությունը համադրելով Հանձնաժողովի դիրքորոշման հետ հստակ երևում է. որ Հանձնաժողովը Ընկերությանը պարտադրել է ներկայացնել ավարտված աշխատանքները ընդունող հանձնաժողովների ակտերը, թեպետ, հրավերով Ընկերությունն իրավունք է ունեցել ներկայացնել հանձման-ընդունման արձանագրություններ (որպիսի հանգամանքն էլ ապահովվել է Ընկերության կողմից):

Ի հավաստումն վերոգրյալի նշենք, որ թեև Հանձնաժովողն իր 3-3 արձանագրության 1.1 կետի բ) ենթակետի 1-ին մասում նշել է, որ բացակայում են 3 պայմանագրերի ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովների ակտերը, միևնույն ժամանակ, նույն արձանագրության 2-րդ մասում ընդունել է թիվ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/12 (03.11.17թ.) պայմանագրի մասով 5-րդ կատարողականի (1070002 ՀՀ դրամի) հանձնման ընդունման արձանագրությունը և դա համարել շտկված թերություն:

3. Հանձնաժողովն իր N 3-3 արձանագրության 1.1 կետի բ) ենթակետի 2 րդ մասում նշել է. «ԿՄՀՔ ՊԲԱՇՁԲ-02/17 (01.06.2017թ.) պայմանագրի մասով Հավելվածներ 4-ի և 4.1-ի օրինակելի ձևերը չեն ներկայացվել:

Անդրադառնալով վերոգրյալ Դիրքորոշմանը, պետք է նշենք, որ Ընկերության կողմից իսկապես չեն ներկայացվել թիվ ԿՄՀՔ ՊԲԱՇՁԲ-02/17 (01.06.2017թ.) պայմանագրի մասով Հավելվածներ 4-ի և 4.1-ի օրինակելի ձևերը, և սույն թերությունն անհնար է եղել վերացնել. քանզի, երբ 2017 թվականի հունիսի 1 ին նշված պայմանագիրը կազմվել է Հրազդանի համայնքապետարանի կողմից թույլ է տրվել տեխնիկական վրիպակ, որպիսի հանգամանքը չի նկատվել նաև Ընկերության կողմից:

4. Հանձնաժողովն իր N 3-3 արձանագրության 1.1 կետի գ) ենթակետի 1-ին մասում նշել է. «Ջերմուկ» համայնքում ճախափնյա թաղամասի բակային շենքերի տանիքածածկույթի շինվերանորոգման աշխատանքներին (ՋՀԲՄ-ԱՇՁԲ 2018/1, 12.04.2018թ.) իրականացվել են օրացույցային գրաֆիկով սահմանված 01.10.2018թ. վերջնաժամկետի էական խախտումներով ավելի քան 60 օրացույցային օր երկարաձգմամբ (03.12.2018թ.), բացակայում է ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովի ակտը, (...), ինչպես նաև բացակայում է պայմանագրի 8.13 կետով պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 5-ը»:

Հանձնաժողովն իր N 3-3 արձանագրության 1.1 կետի գ) ենթակետի 2-րդ մասում նշել է «ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2018/1 (12.04.2018թ.) պայմանագրի մասով ներկայացվել են (...). ինչպես նաև նորից ներկայացվել է դատարկ Հավելված 5-ը»:

Անդրադառնալով Հանձնաժողովի այն պնդմանը, որ վերոգրյալ պայմանագիրն իրականացվել է օրացույցային գրաֆիկով սահմանված 01.10.2018թ. վերջնաժամկետի էական խախտումներով, պետք է նշենք, որ Ընկերությունը, որպես պարտաճանաչ կապալառու, պայմանագրով սահմանված ժամկետում աշխատանքներն ավարտելու դիմաց վճարել է համապատասխան տույժ (որը միանշանակ վկայում է ընկերության դրսևորած բարեխիղճության մասին), և վերջապես, հարկ ենք համարում ընդգծել, որ ոչ մի շինարարական բնույթի ծառայություններ մատուցող կազմակերպություն (նամանավանդ նման մեծ քանակությամբ պայմանագրեր կնքած) երաշխավորված չէ. որ գեթ մեկ անգամ չի խախտի պայմանագրով նախատեսված օրացույցային գրաֆիկով սահմանված աշխատանքների իրականացումը, հաշվի առնելով շինարարության սպեցիֆիկ ոլորտը:

Ավելին, հաշվի առնելով, որ տույժը (տուժանքը) պարտավորությունների կատարումն ապահովող երաշխիք է, որն նպատակաուղղված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում նրա համար նախատեսվել է գույքային անբարենպաստ հետևանքներ դրամական պատասխանատվություն, ուստի նշված հանգամանքը հաշվի առնելով դրա բացասական հետևանքն Ընկերությունն արդեն իսկ կրել է, ինչպես վերը նշվեց՝ պայմանագրով

սահմանված ժամկետում աշխատանքներն ավարտելու դիմաց վճարելով համապատասխան տույժի գումարը:

Քանի որ Հանձնաժողովը սույն պայմանագրի պարագայում ևս նշել է, որ բացակայում է ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովի ակտը, հարկ ենք համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ դրա փոխարեն Ընկերությունը կարող էր ներկայացնել հանձման-ընդունման արձանագրություններ (որպիսի հանգամանքն էլ ապահովվել է Ընկերության կողմից):

Ինչ վերաբերում է Հանձնաժողովի այն պնդմանը, որ սույն պայմանագրի մասով նորից ներկայացվել է դատարկ Հավելված 5-ը, ապա կրկին պետք է նշենք, որ այլ բան չէր էլ կարող ներկայացվել, քանզի սույն Պայմանագրի հավելված 5-ը այդպես դատարկ էլ կնքվել է 2 ընկերությունների կողմից «Նախագծ (կցվում է)» վերտառությամբ (հիմնականում այն պատճառով, որ նախագծի գծագրերը A4 ֆորմատի թղթի վրա չեն տեղավորվում ծավալի պատճառով):

5. Հանձնաժողովն իր N 3-3 արձանագրության 1.1 կետի դ) ենթակետի 1-ին մասում անդրադարձել է Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի ներքին կոյուղագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքների թիվ ԵՔ-ԲԸԱՇՁ-17/18 առ 21.04.2017թ. պայմանագրին և նշել, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նշված աշխատանքների համար լիցենզիա չի պահանջվում:

Այնուամենայնիվ, Ընկերությունը սույն աշխատանքներն իրականացնելու նպատակով ստացել է համապատասխան թույլտվություններ:

Անհասկանալի է Հանձնաժողովի անդրադարձը ռիսկայնության օբյեկտների դասակարգմանը, քանի որ հրավերի մեջ ռիսկայության օբյեկտների վերաբերյալ հիշատակումները բնավ բացակայում են:

Ցանկանում ենք նաև ընդգծել, որ Ընկերությունը թիվ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/12 (03.11.17թ.) պայմանագրով ցույց է տվել էներգետիկ ոլորտում կատարված աշխատանքներ, թիվ ԿՄՀՔ-ՊԸԱՇՁԲ-02/17 (01.06.2017թ.) պայմանագրով ցույց է տվել կապի ոլորտում ստացված լիցենզիան (իսկ հրավերի 2.5 կետի նախատեսվել է՝ սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում սույն հրավերով պահանջվող լիցենզիայի (ներդիրների) շրջանակներում նախկինում կատարված պայմանագրերը), թիվ ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2, (23.09.2017թ.) և թիվ ԵՔ-ԲԸԱՇՁ-17/18 (21.04.2017թ.) պայմանագրերով ցույց է տվել հիդրոտեխնիկական ոլորտում կատարված աշխատանքներ, թիվ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/12 (03.11.17թ.), թիվ ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2, (23.09.2017թ.), թիվ ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2018/1

(12.04.2018թ.) պայմանագրերորվ ցույց է տվել բնակելի, հասարակական և արտադրական ոլորտներում կատարված աշխատանքներ:

Վերոգրյալ պայմանագրերով ստացված թե՛ թույլտվությունները, թե՛ Պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ բավարարում են հրավերի 2.5 կետի պահանջներին:

Հարկ ենք համարում նաև նշել, որ մինչև նշված գնման ընթացակարգին մասնակցելը, Ընկերությունը նման խնդիրներ չի ունեցել, ավելին՝ տարիներ շարունակ ժամանակին և պատշաճ կատարել է իր պարտականությունները:

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու արդյունքում, պատվիրատուները, հետագայում նմանատիպ աշխատանքների դիմաց վճարելու են ավելի բարձր գին. որի հետևանքով էլ պետական բյուջեյից ծախսվող ֆինանսական միջոցների ծավալը բնականաբար մեծանալու է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Ընկերության բոլոր դիրքորոշումները, գտել են, որ առկա չեն «Արհովշին» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

4. <u>ՍՑ-LO-2019/29 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արհովշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 29.03.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Արհովշին» ՍՊԸ-ն ներկայացրել է 546 900 000 ՀՀ դրամ գնային առաջարկ և արձանագրության 2.1 կետով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովը 11.04.2019թ. ժամը 11:30-ին կայացած նիստի N 3-Ի արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Արհովշին» ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում

արձանագրել է անհամապատասխանություններ և 1.2 կետի մասով որոշել է նախկինում՝ կատարված պայմանագրերի մասով «Արհովշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել ոչ բավարար և համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի ծանուցել է «Արհովշին» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը 17.04.2019թ. ժամը 17:30-ին կայացած նիստի N 3-3 արձանագրության 1.2 կետի համաձայն որոշում է կայացրել, որ ներկայացված պայմանագրերը չեն գնահատվում նախկինում կատարված պատշաճ պայմանագրեր և մերժել է «Արհովշին» ՍՊԸ-ի հայտը:

Համաձայն Հանձնաժողովի N 3-3 արձանագրության 1.1 կետի աղյուսակի՝ «Ներկայացվել է ամբարձչի վարձակալության նոր պայմանագիր, սակայն չի ներկայացվել հրավերի 5.1 հավելվածի շտկված տարբերակը»:

Համաձայն Հանձնաժողովի N 3-3 արձանագրության 1.1 կետի բ) ենթակետի 1-ին մասի՝ «(...) ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/12 (03.11.17թ.), ԿՄՀՔ-ՊԸԱՇՁԲ-02/17 (01.06.2017թ.), ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2, (23.09.2017թ.) պայմանագրերով նախատեսված աշխատանքներն իրենց բնույթով չեն համապատասխանում հրավերի պահանջով ներկայացված գործունեության լիցենզիաներին. ինչպես նաև ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովների ակտերը բացակայում են, որոնք պետք է հավաստեն պայմանագրով նախատեսված աշխատանքներն (պարտավորությունները կատարված) ամբողջությամբ ընդունված լինելու մասին (ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում)»:

Համաձայն Հանձնաժողովի N 3-3 արձանագրության 1.1 կետի բ) ենթակետի 2-րդ մասի՝ «Մասնակցի կողմից ներկայացվել են նշված 3 պայմանագրերի մասով բացակայող երկկողմանի հաստատված հարկային հաշիվները.

- ԵՔ ԳՀԱՇՁԲ-17/12 (03.11.17թ.) պայմանագրի մասով 5-րդ կատարողականի (1070002 ՀՀ դրամի) հանձնման-ընդունման արձանագրությունը,
- ԿՄՀՔ-ՊԸԱՇՁԲ-02/17 (01.06.2017թ.) պայմանագրի ծավալաթերթով նախահաշիվը (Հավելված 1) և երկկողմանի հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունները:

Մասնակցի կողմից չեն ներկայացվել.

- Նշված 3 պայմանագրերի մասով ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովների ակտերը,

- ՁՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2. (23.09.2017թ.) պայմանագրի մասով նորից ներկայացվել է դատարկ Հավելված 5-ը,
- ԿՄՀՔ-ՊԸՍՇՁԲ 02/17(01.062017թ.) պայմանագրի մասով Հավելված 4-ի և 4.1 -ի օրինակելի ձևերը»:

Համաձայն «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով հրավերի մեջ նախատեսվել են քաղաքաշինության բնագավառում շինարարության գործունեության իրականացման լիցենզավորման հետևյալ ոլորտները.

1) բնակելի, հասարակական և արտադրական. 2) հիդրոտեխնիկական, 3) էներգետիկ և 4) կապ:

Համաձայն թիվ ՁՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2 (23.09.2017թ.) պայմանագրով Ընկերությունը «Ջերմուկ համայնքում իրականացրել է աջափնյա թաղամասի բակային տարածքների բարեկարգում, բակային ճանապարհների ասֆալտապատում ե եզրաքարերի տեղադրում:

Համաձայն Հանձնաժողովի N 3-3 արձանագրության 1.1 կետի գ) ենթակետի 1-ին մասի՝ «Ջերմուկ» համայնքում ձախափնյա թաղամասի բակային շենքերի տանիքաածածկույթի շինվերանորոգման աշխատանքներին (ՁՀԲՄ-ԱՇՁԲ-2018/1, 12.04.2018թ.) իրականացվել են օրացույցային գրաֆիկով սահմանված 01.10.2018թ. վերջնաժամկետի էական խախտումներով ավելի քան 60 օրացույցային օր երկարաձգմամբ (03.12.2018թ.), բացակայում է ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովի ակտը, (...), ինչպես նաև բացակայում է պայմանագրի 8.13 կետով պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 5-ը»:

Համաձայն Հանձնաժողովի N 3-3 արձանագրության 1.1 կետի դ) ենթակետի 1-ին մասի՝ թիվ ԵՔ-ԲԸԱՇՁ-17/18 առ 21.04.2017թ. պայմանագրով նախատեսված Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի ներքին կոյուղագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքների համար «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով լիցենզիա չի պահանջվում:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.04.2019թ. թիվ 26/26-1/6998-2019 գրությամբ «Արհովշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ:

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված

տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին՝ ունանալով պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

Հրավերի 2.5 կետի համաձայն.

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթա¬ցա¬կարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայ¬տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում սույն հրավերով պահանջվող լիցենզիայի (ներդիրների) շրջանակներում նախկինում կատարված պայմանագրերը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցների «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Ընդ որում նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 61-րդ կետի դիսպոզիցիայից (բովանդակությունից) ուղղակի հետևում է, որ «նմանատիպ պայմանագիր» եզրույթն իրենից ներկայացնում է երեք կարևոր միաժամանակյա վավերապայմանների առկայություն, դրանք են՝

1. Պայմանագիրը պետք է կատարված լինի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում,
2. Պետք է կատարված լինի պատշաճ ձևով,
3. Գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Ջերմուկ» համայնքում ձախափնյա թաղամասի բակային շենքերի տանիքաածածկույթի շինվերանորոգման աշխատանքները (թիվ «ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2018/1», 12.04.2018թ.) Մասնակցի կողմից իրականացվել են օրացույցային գրաֆիկով սահմանված 01.10.2018թ. վերջնաժամկետի էական խախտումներով ավելի քան 60 օրացույցային օր երկարաձգմամբ (03.12.2018թ.):

Անդրադառնալով Ընկերության այն պնդմանը, որ *«Ընկերությունը, որպես պարտաճանաչ կապալառու, պայմանագրով սահմանված ժամկետում աշխատանքներն ավարտելու դիմաց վճարել է համապատասխան տույժ (որը միանշանակ վկայում է ընկերության դրսևորած բարեխիղճության մասին), և վերջապես, հարկ ենք համարում ընդգծել, որ ոչ մի շինարարական բնույթի ծառայություններ մատուցող կազմակերպություն (նամանավանդ նման մեծ քանակությամբ պայմանագրեր կնքած) երաշխավորված չէ. որ գեթ մեկ անգամ չի խախտի պայմանագրով նախատեսված օրացույցային գրաֆիկով սահմանված աշխատանքների իրականացումը, հաշվի առնելով շինարարության սպեցիֆիկ ոլորտը»*, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 61-րդ կետի 1-ին

ենթակետի պահանջն է ոչ թե ներկայացնել նախկինում կատարած պայմանագիր, այլ ներկայացնել նախկինում պատշաճ կատարած պայմանագիր:

Այլ կերպ ասած, Կարգի իմաստով որևէ մեկը քննարկման առարկա չի դարձնում ընկերության բարեխղճությունը և տույժի վճարված լինելու հանգամանքն էլ չի կարող վկայել պայմանագրի պատշաճ կատարման մասին, այլ հակառակը, դրա առկայության պայմաններում հիմնավորվում է ոչ պատշաճ՝ կետանցմամբ կատարումը: Հատկապես երբ՝ տույժը (տուժանքը) պարտավորությունների կատարումն ապահովող երաշխիք է, որն նպատակաուղղված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում վերջինիս համար նախատեսում է գույքային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած

մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ տվյալ մասնակցի հայտը պետք է մերժվի, մասնակիցն էլ ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն ներկայացրած անձինք գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն, ու այդ դեպքում մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ «Արհովշին» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում ներկայացնելով նախկինում ոչ պատշաճ կատարված թիվ «ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2018/1» պայմանագիրը, չներկայացնելով իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ, նյութեր կամ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող ապացույց, չի բավարարել Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, դրանով իսկ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.04.2019թ. թիվ 26/26-1/6998-2019 գրությամբ «Արհովշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Արհովշին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու (2) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ